«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԲԱԺՆԻ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Հավելված 1
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
պետական ինստիտուտ» հիմնադրամի
Գիտական խորհրդի
2022 թվականի հունիսի 30-ի թիվ 121-Լ որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԲԱԺՆԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ Ինստիտուտ) Պրակտիկայի բաժնի (այսուհետ՝ Բաժին) կանոնակարգը սահմանում է Բաժնի նպատակը, խնդիրները, կառուցվածքը, իրավասությունները, բաժնի ղեկավարի և աշխատողների իրավունքներն ու պարտականությունները և պատասխանատվության շրջանակը:
2. Բաժինը իր գործունեությունն իրականացնում է «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքների, Ինստիտուտի կանոնադրությանը և ներքին իրավական ակտերին համապատասխան:
3. Բաժինը կարող է ունենալ կնիք և ձևաթուղթ:
4. Բաժինը վերակազմավորվում կամ լուծարվում է համաձայն Ինստիտուտի կանոնադրության:

2. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԲԱԺՆԻ ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Բաժնի նպատակն է Ինստիտուտում գործող բոլոր կրթական ծրագրերով նախատեսված պրակտիկանների կազմակերպումը և վերահսկում:
6. Բաժնի խնդիրներն են՝

1) պրակտիկաների նախապատրաստական աշխատանքների, ընթացքի և կատարված աշխատանքների հսկում և համակարգում,
2) պրակտիկայի արդյունքների մասին հաշվետվությունների ներկայացում,
3) պրակտիկայի գործընթացի բարելավման նոր արդյունավետ մոտեցումների մշակում:

7. Բաժնի գործառույթներն են՝

1) Բաժնի աշխատանքների համակարգում և վերահսկողություն,
2) բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի շրջանակում իրականացվող պրակտիկաների ողջ գործընթացի կազմակերպում, վերահսկում և ամփոփում,
3) պրակտիկայի բազաների և մեթոդիստների կազմի որոշում, վերջիններիս հետ գիտամեթոդական խորհրդակցությունների, սեմինարների անցկացում,
4) պրակտիկայի բազաների ներգրավման աշխատանքներ,
5) շահագրգիռ կողմերի հետ համատեղ մեթոդիստների վերաապատրաստումների և որակավորման բարձրացմանն ուղղված դասընթացների ծրագրերի մշակում,
6) պրակտիկայի ընթացքի վերահսկողություն և համակարգում,
7) մեթոդիստների հետ համատեղ պրակտիկաների ամփոփում՝ հաշվետվությունների ընդունում, գնահատում
8) պրակտիկայի արդյունքների վերաբերյալ հաշվետվության ներկայացում ֆակուլտետների խորհուրդներում,
9) պրակտիկայի կազմակերպմանը վերաբերելի ներքին իրավական ակտերի նախագծերի մշակում,
10) լավագույն ուսանող-պրակտիկանտների բազաների ստեղծում և վարում,
11) ելից գրությունների նախագծերի, զեկուցագրերի, պահանջագրերի կազմում,
12) Բաժնի գործունեությանը վերաբերելի ներքին իրավական ակտերի և դրանց փոփոխությունների նախագծերի կազմում և ներկայացում համապատասխան մարմնի հաստատմանը,

13) Բաժնի գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվության, աշխատանքային պլանների կազմում և ներկայացում, առաջարկությունների ներակայցում,
14) ՀՀ տարբեր գերատեսչություններից ստացված գրությունների պատասխանների նախագծերի կազմում:

3. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

8. Բաժնի կառուցվածքը սահմանվում է Ինստիտուտի հաստիքացուցակով:
9. Բաժնի ղեկավարի և աշխատողների աշխատանքային իրավունքների և պարտականությունների շրջանակը սահմանվում է ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ, սույն կանոնակարգով, Ինստիտուտի ներքին իրավական այլ ակտերով, աշխատանքային պայմանագրերով և աշխատանքի նկարագրերով:
10. Բաժնի ղեկավարումը իրականացնում է բաժնի ղեկավարը՝ համաձայն Ինստիտուտի կանոնադրության, սույն կանոնակարգի և իրավական այլ ակտերի:
11. Բաժնի ղեկավարին նշանակում և ազատում է Ինստիտուտի ռեկտորը:
12. Բաժնի աշխատանքները համակարգում է ուսումնագիտական գծով պրոռեկտորը, ում անմիջապես ենթակա և հաշվետու է Բաժնի ղեկավարը:

4. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

13. Բաժնի ղեկավարը և աշխատողները պարտավոր են պահպանել Ինստիտուտում գործող ներքին իրավական ակտերը, սահմանված ժամկետներում, բարեխղճորեն և պատշաճ հետևողականությամբ կատարել Ինստիտուտի ռեկտորի կողմից իրենց տրված հանձնարարականները և կարգադրությունները:
14. Բաժնի ղեկավարը և աշխատողները պատասխանատու են իրենց վրա դրված գործառույթների ժամանակին և պատշաճ կատարման համար:
15. Բաժնի ղեկավարը և աշխատողները իրենց վրա դրված պաշտոնեական պարտականությունները չկատարելու համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
16. Բաժնի աշխատողները պարտավոր են ապահովել իրենց ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում իրենց հայտնի դարձած տեղեկատվության

գաղտնիությունը: Դրանք հրապարակելու դեպքում նրանք պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

17. Բաժնի աշխատողների գործառութային պարտականությունները սահմանվում են պաշտոնի նկարագրերով:

5. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

18. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում Ինստիտուտի Գիտական խորհրդի կողմից հաստատվելու օրվան հաջորդող օրվանից:
19. Սույն կանոնակարգում փոփոխությունները և լրացումները կատարվում են Գիտական խորհրդի որոշմամբ: